ՀՀ ԳԱԱ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ՝ ՆՎԻՐՎԱԾ 1941–1945 ԹԹ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 60-ԱՄՅԱԿԻՆ

2005 թ. մայիսի 6-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԳԱԱ հոբելյանական գիտաժողովը՝ նվիրված 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 60-ամյակին: Բացելով գիտաժողովը՝ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանն ասաց, որ Հայրենական մեծ պատերազմում ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակը պատմական կարևոր նշանակություն ունեցավ աշխարհի մարդկությանը ֆաշիստական ստրկությունից ազատելու, այնպես էլ հայ ժողովրդին թուրքական մի նոր, ահավոր եղեռնից փրկելու գործում: Չէ՞ որ պատերազմի առաջին շրջանի ծանր օրերին ֆաշիստական Գերմանիայի փաստացի դաշնակից Թուրքիան Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ էր տեղաբաշխել 26 սպառազեն դիվիզիա (յուրաքանչյուրում 15–20000 զինվոր ու սպա) և հարմար պահի էր սպասում Հայաստան ներխուժելու համար: Թուրքական խորամանկ դիվանագետներն այդպիսի հարմար պահը համարում էին Ստալինգրադի ճակատամարտում վերմախտի կողմից Կարմիր բանակին հաղթելը: Սակայն, ինչպես հայտնի է, այդ ճակատամարտում գերմանական բանակը և նրա դաշնակիցները խայտառակ պարտություն կրեցին. միայն Ստալինգրադի շրջանում շրջապատվեց և ջախջախվեց հակառակորդի 330-հազարանոց զորախումբը ֆելդմարշալ Պաուլյուսի գլխավորությամբ: Խորհրդային զորքերի այդ պատմական հաղթանակը զսպաշապիկ հագցրեց Թուրքական ռազմամոլներին և ստիպեց նրանց հրաժարվել Խորհրդային Հայաստանի վրա հարձակվելու մտքից: Եթե այսօր կա ներկա Հայաստանի Հանրապետությունը, ապա մենք դրանում պարտական ենք Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակին: Ահա թե ինչու է այդ պատերազմը հայերի համար ևս համարվում հայրենական, ահա թե ինչու էր այդ հաղթանակը համարվում նաև մերը:

Հիշենք, շարունակեց ԳԱԱ պրեզիդենտը, որ դեռևս Լեհաստանի վրա հարձակվելուց մի քանի օր առաջ, 1939 թ. օգոստոսի 22-ին, Օբերզալցբուրգում Երրորդ ռայխի բարձրագույն հրամանատարության հետ հանդիպման ժամանակ, Հիտլերը հատուկ ցուցում էր տվել իր զորավարներին, որ առաջիկա պատերազմում անխնա բնաջնջեն սլավոնական ժողովուրդներին՝ ուշադրություն չդարձնելով հասարակական կարծիքի վրա: «Այժմ, մեր ժամանակներում, այլևս ո՞վ է հիշում 1915 թ. Թուրքիայում հայերի բնաջնջման մասին»,– իր գեներալներին ոգևորելու համար ցինիկաբար նշել էր Ֆյուրերը: Ուստի, պատահական չէր, որ պատերազմն սկսվելու առաջին իսկ օրվանից, հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեց՝ պաշտպանելու իր գոյությունը, որովհետև նա պարզ գիտակցում էր, թե

ինչ վտանգ է սպառնում իրեն, եթե դերմանացիները Ստալինգրադի տակ պարտության մատնեին խորհրդային զորքերին:

Պատերազմի առաջին իսկ օրվանից, այնուհետև ասաց Ֆ. Սարգսյանը, Խորհրդային Հայաստանի կուսակցական, պետական և զինվորական մարմիններն անմիջապես լծվեցին հանրապետության մարդկային և ռազմական կարողությունների մոբիլիզացման աշխատանքներին: Ամբողջ աշխատանքը վերակառուցվեց պատերազմական պահանջներին համապատասխան: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1941 թ. հունիսի 22-ի զինապարտների մասին հրամանագրի համաձայն, բանակ զորակոչվեցին սկզբում 1905–1918 թթ. ծնված զինապարտները, ապա 1919–1925՝ նույնիսկ 1926 թ. ծնվածները: Բանակում քիչ չէին նաև 1894–1904 թթ. ծնվածները: Հունիսի 23-ից հանրապետությունում սկսվեցին զանգվածային զորահավաքի աշխատանքները: Հատուկ կարևորություն էր ստացել մանավանդ ազգային գիվիզիաների կազմավորումը, որը Խորհրդային Հայաստանում կատարվեց ժամանակին և հաջողությամբ: Կարճ ժամանակամիջոցում հանրապետության տարածքում ձևավորվեցին Հայկական 89-րդ, 261-րդ, 408-րդ և 409-րդ հրաձգային դիվիզիաները, որոնց անձնակազմերը դերազանցապես համալրված էին հայերով: Ավելի վաղ՝ 1920–1922 թթ., Հայաստանում կազմավորված Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան, որը 1938–1940 թթ. վերակազմավորվել էր որպես ոչ ազգային միավորում, 1941 թ. հունիսի 22-ից հուլիսի 22-ը համալրվելով հանրապետության մարդկային և նյութական միջոցների հաշվին, կրկին ձեռք բերեց իր նախկին ազգային տեսքը և մեկնեց ռազմաճակատ: Թվով վեցերորդը՝ 390-րդ հայկական հրաձգային դիվիզիան, կազմավորվեց 1942 թ. փետրվար-մարտ ամիսներին՝ Կերչում, մարտական պայմաններում:

Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում հանրապետությունում հսկայական աշխատանք կատարվեց արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը պատերազմական պայմաններին համապատասխան վերակառուցելու, ռազմաճակատի կարիքների համար զենքի ու զինամթերքի թողարկումը դյուրացնելու, դործող բանակի համար տաք հագուստ արտադրելու և հավաքելու ուղղությամբ: Պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանում շահագործման հանձնվեց արդյունաբերական 30 նոր ձեռնարկություն, որոնց թվում՝ ավիացիոն, կոմպրեսորների, ժամացույցի, շարժիչավերանորոգման, ավտոդողերի և այլն: Արդյունաբերությունը յուրացրեց 300 նոր տեսակի առարկաների արտադրությունը, այդ թվում՝ 10 տեսակի ռազմամթերքի, ականանետների, ականների, նռնակների, նույնիսկ ինքնաթիռների արտադրությունը և այլն: Գյուղատնտեսության աշխատողների ջանքերով պատերազմի տարիներին ոչ միայն չկրճատվեց գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու ցանքատարածությունների մակերեսը, այլև զգալի չափով աճեց:

Թիկունքի աշխատավորների ձեռք բերած հաջողությունների գործում, նշեց ԳԱԱ պրեզիդենտը, զգալի ավանդ ներդրեցին հայ դիտնականները: Հանրապետության դիտահետազոտական հիմնարկների ղեկավարությունը մի միասնական կենտրոնում միավորելու և դիտական աշխատանքի ավելի

նպատակասլաց զարգացումն ապահովելու համար 1943 թ. նոյեմբերի 29-ին ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի հիման վրա հիմնադրվեց Խորհրդային Հայաստանի գիտությունների ակադեմիան: Ակադեմիայի առաջին պրեզիդենտ դարձավ ակադ. Հովսեփ Օրբելին, փոխպրեզիդենտներ՝ Վիկտոր Համբարձումյանը և Վարդան Գուլքանյանը: Հայրենական մեծ պատերազմի ծանր տարիներին, երբ խորհրդային ժողովուրդը կենաց ու մահվան պայքար էր մղում գերմանաֆաշիստական զավթիչների դեմ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծումը քաղաքական ու հասարակական խոշորագույն նշանակություն ունեցող իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում:

Այնուհետև ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը հակիրճ բնութագրեց պատերազմի տարիներին հայ գիտնականների նվաճումները՝ ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական, ֆիզիկական, քիմիական, բժշկական, հումանիտար և այլ բնագավառներում, թվարկեց ռազմաճակատում մարտնչած հայ գիտնականների անունները:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմին» թեմատիկ խմբի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը հանդես եկավ «Հայ ժողովրդի ավանդը 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում» զեկուցումով: Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին, հատկապես Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, քաջառողջություն մաղթեց նրանց. «Հայրենական մեծ պատերազմի տարբեր ռազմաճակատներում ձեր թափած արյան և տարած հաղթանակի շնորհիվ է, որ Խորհրդային Հայաստանը գերծ մնաց թուրքական հարձակումից ու նոր եղեռնից: Որ այսօր գոյություն ունի Հայաստանի երրորդ հանրապետությունը, դա արդյունք է Մեծ Հայրենականում տարած ձեր հաղթանակի, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը և գլուխ խոնարհում պատերազմում զոհվածների հիշատակին»: Այնուհետև, հակիրճ բնութագրելով Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում հայ ժողովրդի ներդրած ավանդը, զեկուցողն ասաց, որ, ընդհանուր առմամբ, պատերազմին մասնակցել է շուրջ 600000 հայորդի, որից 300000-ը Խորհրդային Հայաստանից, 200000-ը՝ ԽՍՀՄ այլ հանրապետություններից, 100000-ը՝ արտասահմանյան տարբեր երկրներից: Նրանցից ավելի քան 200000-ը զոհվել են մարտերում: Պատերազմին հայ ժողովրդի մասնակցության ակտիվությունը դրսևորվեց ոչ միայն բանակին այդքան մարդ զինվորագրելով, այլև նշանավոր բոլոր ճակատամարտերին տարբեր զորատեսակների կազմում ցուցաբերած հերոսությամբ, կրտսեր, միջին, ավագ և բարձր հրամանատարական կազմում ունեցած իր տեսակարար կշռով: ԽՍՀՄ պաշտպանության նախարարության գլխավոր կադրերի վարչության պարգևատրման բաժնի 1947 թ. նոյեմբերի 1-ի տվյալներով, Հայրենական մեծ պատերազմի տարիներին մարտական շքանշաններով ու մեդալներով պարգևատրվածների թվում հայերը գրավում են առաջնակարգ տեղ՝ ռուսներից, ուկրաինացիներից, բելոռուսներից հետո և այլն: Ըստ այդ տվյալների, պարգևատրվել են 66802 հայ, 49106 վրացի, 36180 ադրբեջանցի և այլն: Հայերն առաջ-

նակարգ տեղ են գրավել նաև Խորհրդային Միության հերոսների քանակությամբ: Այսպես, օրինակ, Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939–1945 թթ.) Խորհրդային Միության հերոսի կոչման են արժանացել (ռուսներից, ուկրաինացիներից, բելոռուսներից, թաթարներից և հրեաներից հետո) 103 հայ, 96 դազախ, 89 վրացի, 69 ուզբեկ, 44 չուվաշ, 43 ադրբեջանցի և այլն (ադրբեջանցի համարվող հերոսների մի մասը քրդեր, լեզգիներ, թաթեր են):

Հետպատերազմյան տարիներին կատարած ակնառու ծառայություններ համար հերոսի կոչում է շնորհվել ևս 3 հայի: Այսպիսով, Խորհրդային Միության հերոսի կոչման են արժանացել 106 հայ, այդ թվում 5 ռուս, մեկական ուկրաինացի, հույն, ասորի, քուրդ և ադրբեջանցի: Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը և գրոհային օդաչու, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը հերոսի կոչմանն արժանացել են կրկնակի անգամ, պատերազմի տարիներին կրկնակի հերոսներ են դարձել 115 մարդ:

Հայրենական մեծ պատերազմում կատարած սխրանքների համար 27 հայ ռազմիկներ պարգևատրվել են Փառքի շքանշանի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճաններով ու դարձել Զինվորական Փառքի շքանշանի լրիվ ասպետներ: Ուշագրավ է, որ երբ 1943 թ. նոյեմբերի 8-ին հիմնադրվեց Փառքի 3-րդ աստիճանի շքանշանը, ապա նոյեմբերի 17-ին այդ շքանշանով Կարմիր բանակում առաջինը պարգևատրվեց սերժանտ Գևորգ Իսրայելյանը:

Պատերազմի տարիներին գիտության, արդյունաբերության և ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում կատարած ակնառու ծառայությունների համար 8 հայորդու շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

Այնուհետև զեկուցողն բնորոշ օրինակներով բնութագրեց պատերազմի բոլոր գլխավոր ճակատամարտերում և տարբեր զորատեսակների կազմում աչքի ընկած հայորդիների սխրանքները, համառոտակի նշեց հայկական դիվիզիաների անցած մարտական ուղին, շեշտեց, որ պատերազմի տարիներին հայերից մեկը եղել է ռազմաճակատի, երեքը՝ բանակի, վեցը՝ կորպուսի, քսանութը՝ դիվիզիայի, ավելի քան հարյուրը՝ բրիգադի և գնդերի հրամանատարներ: Կ. Հարությունյանը բարձր գնահատեց նաև հայ պարտիզանների, դիմադրական շարժման մասնակից սփյուռքահայերի և Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատողների հերոսական գործունեությունը, որոնք իրենց սխրանքներով ու աշխատանքով զգալի ավանդ ներդրեցին ֆաշիզմի ջախջախման գործում:

Գիտաժողովում ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ պատերազմի և աշխատանքի վետերանների խորհրդի նախագահ, կենսաբանական գիտությունների դոկտոր Սամվել Մելքոյանը, Հայրենական մեծ պատերազմի մասնակից Գրիգոր Մարտիրոսյանը: Այնուհետև Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի անունից պատերազմի մասնակից ՀՀ ԳԱԱ 33 և թիկունքի 17 վետերանների 100-ական ամերիկյան դոլար հանձնեց Վլադիմիր Աղայանը: Միաժամանակ Արա Աբրահամյանն ուղերձով դիմել էր վետերաններին, որտեղ մասնավորապես ասվում էր. «Սիրելի հայրենակից, Համաշխարհային հայ-

կական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 60-ամյակի առթիվ: Մենք մեր երախտիքն ենք արտահայտում Ձեր գործած սխրանքների, հերոսության և մեզ պարգևած խաղաղության համար: Սերունդները գլուխ են խոնարհում Ձեր քաջության և ազատությամբ պսակված հաղթանակի առջև: Մեծ հաղթանակի այս հոբելյանական տարին թող Ձեզ բերի նոր երջանկություն, նոր բերկրանք, ապրելու, ստեղծագործելու կյանքը վայելելու նոր ուժ: Մեր խոնարհումն ու երախտագիտությունը Ձեզ, Մեծ Հայրենականի քաջարի Զինվոր»:

Այնուհետև ՀՀ վարչապետի ներկայացուցիչը 25000-ական դրամ հանձնեց 11 վետերանի, իսկ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը պատվոգրեր՝ պատերազմի և թիկունքի վետերաններին: ՀՀ Նախագահ Ռ. Քոչարյանի հրամանագրով ՀՀ բոլոր վետերանները պարգևատրվել էին 10000 դրամով և համապատասխան հոբելյանական մեդալներով, իսկ ՀՀ ԳԱԱ համակարգի ինստիտուտների տնօրինություններն իրենց աշխատակից վետերաններին պարգևատրել էին յուրաքանչյուրին 10000-ական դրամով:

Գիտաժողովի վերջում մասնակիցներն ու հյուրերը մեծ հետաքրքրությամբ դիտեցին ԳԱԱ նախագահության շենքի նախասրահում բացված դրականության ցուցահանդեսը՝ նվիրված մեծ հաղթանակի 60-ամյակին, որը կազմակերպել էին ԳԱԱ հիմնակազմ գրադարանի աշխատակիցները: